# ՀԵՏԱՄՈՒՏԻ ՃԱՆԱՊԱՐՀ ՉԿԱ

Վերջին տարիներին մենք ականատես եղանք և բնենք էլ ապացուցեցինք, որ մտածելն ամենևին սրբապղծություն չէ: Բարձրաձայն մտածելն՝ առավել ևս: Մինչ այդ մեզ հակառակն էին ուզում հասցնել: Մեր մաշկի վրա զգացել էինք, որ կա երկու ճշմարտություն՝ «ներքևների» ու «վերևների»: Առաջինը ժողովրդի, մասսաների (Չարենցը կասեր՝ խոլացրած ամբոխների) ճշմարտությունն է, որ մերկ ու անպաճույճ է, երկրորդն, ընդհակառակը, փառահեղորեն հանդերձավորված է բարձրագոչ լոզունգներով ու բուռն ծափահարություններով...

Երբ տվյալ հասարակարգը առողջ է կամ առողջ դառնալու միտում ունի, անհրաժեշտ է վերականգնել ճշմարտության վարկը: Չպիտի լինեն «վերևների» ու «ներքևների» ճշմարտություններ, այլ միայն մեկ ճշմարտություն պիտի լինի, ինչքան էլ այն դառը լինի:

Արդարության համար իր ձայնը բարձրացրած արցախցուն չպիտի սաստել իր մեծ հույսի ու երազանքների, իր մեծ հավատի համար: Վերջապես՝ նա «յուղ ու բրնձի» համար չի ոտքի ելել (չնայած «յուղ ու բրինձն» էլ, ինչ խոսք, կարևոր է): Նա ելել է պաշտպանելու իր ճշմարտությունը: Դա ժողովրդի ճշմարտությունն է, իսկ այն չի կարող մեռնել, որովհետև արմատները խորն են: Վկան՝ Ամարասը, Գանձասարը, «Մենք ենք, մեր սարերը»...

«Ժամանակ» ինֆորմացիոն ծրագրով վերջերս, որպես աշխալուսանք, ի լուր աշխարհի, հայտարարվեց, որ «Լեռնային Ղարաբաղ» պրոբլեմի լուծման համար ներկայացված է յոթ տարբերակ: Չգիտեմ, թե աշխարհն ինչպես ընկալեց «ԽՍՀՄ ամենացավոտ պրոբլեմի» լուծման համար առատության եղջյուրից թափված այսքան «բանալիների» փունջը, բայց ես ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես կարող է նույն հարցի վերաբերյալ գոյություն ունենալ ոչ թե մեկ, այլ մի ամբողջ յոթ ճշմարտություն: Հետաքրքիր է, այդ «յոթ տարբերակների» մեջ արդյոք կա՞ միակ և արդարացի տարբերակը (մեծն ճշմարտությունը), այն, որ Արցախը պետք է միացվի Հայկական ԽՍՀ-ին:

Վերակառուցման-վերանորոգման կարիք զգացող մեր հասարակական կյանքի թերացումներն ու խեղումները մեկ-երկու օրվա մեջ չեն գոյացել, այլ ողջ 6-7 տասնամյակների ընթացքում, երբ ճշմարտությունը փոխարինվում էր խաբեությամբ, աչքակապությամբ ու ինքնագոհ սնապարծությամբ: Երբ բռնապետը ձգտում էր իր երկրի լավագույն զավակների ոչնչացման ճանապարհով շուտափույթ հասնել կոմունիզմին, երբ շքանշանների ու մեդալների թվով Գինեսի ռեկորդակիրը իր երկրի զարգացման աստիճանը որոշում էր իր կրծքին շարված փառահեղ մետաղակույտի ծանրությամբ, երբ թերթերն ու եթերը շնչահեղձ էին լինում ներբողների ու գա-

(շարունակությունը՝ 2-րդ էջում)

Լուս. «ԱՄԱՐԱՍ»



Պարետային ժամ...

(Սկիզբը՝ 1-ին էջում)

# ՀԵՏԱԴԱՐՁ ՃԱՆԱՊԱՐՀ ՉԿԱ

նազան «ողողումներով ոգևորված» անշեղորեն պլաններ կատարող մանկուրտների ու փոքրուց խոզապահ դառնալ երազողների ծանրությունից: Երբ կարծում էին, թե աղբը տան մեջ խսամով քալցներով միայն կարելի է աշխարհին ապացուցել, որ մաքուր ենք: Երբ սենք սեզ զարդարել էինք լոզունգների ու «քուռն երկարատև ծափահարությունների» թվացյալ երջանկությամբ ու քոզ էինք փչում աշխարհի ու մեր աչքերին: Աշխարհին ինչ, իր համար ապրում էր, երկրագնդի պտույտների թիվը դրանից չէր ավելանում կամ նվազում, բայց մենք չնչանեղձ էինք լինում... Ճնշանեղձ էինք լինում ու երգում. «Իմ հասցեն ոչ տուն է, ոչ փողոց, իմ հասցեն Խորհրդային Միությունն է...» բափառաշրջիկային երգը...

Այսպես ասած, պաշտամունքի առարկաներից յուրաքանչյուրի գահակալության ժամանակաշրջանում խորհրդային հանրապետություններում, մարզերում, օկրուգներում ու շրջաններում սնկի պես բազմանում էին միկրոառաջնորդներ, որոնք երբ օժտըված էլ չէին լինում իրենց «հոգեվոր հոր» ընդհանուր գծերով, ապա օժտըված էին լինում մի այնպիսի քաղաքական հոտառությամբ, որ իսկույն կարողանում էին որսալ գերագույնի թուլությունները ու, ըստ այդմ էլ, կազմել գործելակերպի իրենց տակտիկաստրատեգիական ծրագրերը: Այսպես, Բրեժնևի գահակալության ժամանակներում, հեռու չգնանք, Ադրբեջանում այդկերպ էին գործում Ալիևը, Բագիրովը: Իսկ վերջիններիս հայրական հովանավորությամբ մեր մարզում լիիշխան տեր էր դարձել դրածո Բորիս Կևորկովը: Կևորկովշչինա չարիքի մասին վերջին մեկ և կես տարում շատ է խոսվել: Ցավոք, քննադատողների առաջին շարքերում երբեմն հայտնվում են նրանք, ովքեր մի քանի տարի առաջ Կևորկովի կամակատար-զինվորները էին...

Մենք նպատակ չունենք երկար կանգ առնել մեր մարզի նախկին միապետի ու նրա թիկնապահ-զինվորիկների աշխույժ գործունեության վրա, որովհետև ինչպես ասում են՝ այդ նրանք չէ, որ ղեկավարում էին պարահանդեսը: Նրանք մեծ մեխանիզմի փոքրիկ պտուտակները էին: Իսկ պարահանդեսը ղեկավարում էին երկրի գերագույն այրերը:

Մեր այս վերջին 6-7 տասնամյակները ողողած պաշտամունքներից վաղուց ժամանակն է անհրաժեշտ եզրակացություններ անել, որպեսզի չկրկնվեն Ստալինն ու Բրեժնևը: Իրավական պետություն ստեղծելու համար ի սկզբանե պիտի ապահովել դեմոկրատիայի ու հրապարակայնության անվտանգությունը, վերականգնել ճշմարտության վարկը: Առողջ քննադատության համար չպիտի լինեն արգելագոտիներ, «չի կարելիներ»:

Բյուրոկրատիան, չինովնիկությունը տարիներ շարունակ տնօրինելով մեր երկրի ճակատագիրը, մեզ համար սահմանել են գոյության թույլատրելի նորմաներ, որի սահմաններից յուրաքանչյուր շեղում խստիվ արգելվում է: Այն, ինչ հեղափոխության հաղթանակից հետո տարիներ ի վեր չի եղել, ուրեմն, բնականաբար, չպիտի լինի (չի՛ կարելի): Այսպես էին մտածում նախկին բյուրոկրատները: Այսպես են մտածում նաև նորաթուխ բյուրոկրատները: Եվ այսօր այնքան էլ զարմանալի չէ, թե ղարաբաղյան շարժման սկզբնական շրջանում ինչպիսի արշավանքների թատերաբեմ դարձանք (Ազգային հա՞րց՝ չի-կարելի): Եվ արցախահայության արդար պահանջը, պարզից-պարզ հարցը դարձավ բարդ պրոբլեմ, «Լեռնային Ղարաբաղ և նրա շուրջ»...

Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր պրոբլեմներն է առաջադրում: Եվ երբ մենք այսօր գլուխ չենք հանում կամ չենք ուզում գլուխ հանել այսօրվա մեր շատ ու շատ ցավոտ հարցերից, ապա վաղը, երբ բնականաբար նոր պրոբլեմներ կծագեն, առավել մեծ դժվարության առաջ կկանգնենք ու ստիպված պիտի լինենք այսօրվա մի քանիսի փոխարեն վաղը լուծել մի քանի տասնյակ ոչ դյուրին խնդիրներ:

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարը ոչ միայն խոշոր իրադարձություն էր, այլ նաև այն լակմուսաթուղթն էր, որ ի ցույց դրեց մեր երկրի անցյալն ու ներկան: Խորհրդածությունների տեղիք էր տալիս հատկապես վերջինի անմխիթար վիճակը: Դա զգացվեց ոչ միայն անհատական ելույթներից, այլև ծափահարությունների մեջ ծանոթ մթնոլորտից, նաև ագրեսիվ-մեծամասնության ամեն մի առաջավոր միտք քարկոծելու մոլեռանդությունից (պարզվում է, որ երկու-երեք հազար հոգու կողմից ընտրված լինելը, շատերի կարծիքով, բավական է, որպեսզի դեպուտատ-հավաքարարը դասեր տա դեպուտատ-ակադեմիկոսին):

Ճշմարտության դեմ մեղանչած կլինեմ, երբ ասեմ, թե համագումարը արդարացրեց սպասելիքները: Ցավոք, այդպես չեղավ: Փոխանակ մի վստահ քայլ կատարելու դեպի իրավական պետություն, փոխանակ դեմոկրատիան ամբիոններից իջեցնելու ու խոսքից գործի կոչելու, անընդհատ տարփողում ենք, թե մի շտապեք, մենք դեռևս դեմոկրատիա ենք սովորում: Իհարկե, սովորելը վսեմ զբաղմունք է, բայց երբ այս տեմպերով շարունակենք «դեմոկրատիա սովորել», 4-5 տասնամյակում հազիվ ավարտենք տարրական դասընթացները...

Այսօր դեռևս դժվար է կանխատեսումներ անել, թե ինչ կլինի հինգ, տասը տարի հետո, ինչպիսի ճակատագիր է սպասվում վերակառուցմանը, դեմոկրատիային: Սակայն այսօր մի բան պարզ է՝ ինչ էլ պատահի, հետադարձ ճանապարհ չկա: Ես հավատում եմ Լենինին և ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների ազնիվ փոքրամասնությանը: Վերակառուցումը չի պարտվի, որովհետև մենք նրանց պես դեպուտատներ ունենք:

ՎԱՐԴԳԵՍ ՕՎՅԱՆ